Մրցույթ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունի գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության «Ֆիզիկա» (9 դասաժամ), քիմիայի (8 դասաժամ), կենսաբանության (8 դասաժամ) առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարերի:
Հարցազրույցի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1),
- 1 լուսանկար 3Х4 չափի,
- բարձրագույն կրթությանը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝(առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն(Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարրակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են 2022 թվականի սեպտեմբերի 5-ից մինչև 2022 թվականի սեպտեմբերի 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10.00-ից 15.00-ը, բացի շաբաթ, կիրակի, և ոչ աշխատանքային այլ օրերից:
Մրցույթը տեղի կունենա **2022 թվականի սեպտեմբերի 20-ին, ժամը 13.00-ին**, Մարտունի գյուղի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Մարտունի:
Տեղեկությունների համար զանգահարել (041)02-55-63 հեռախոսահամարով: